

ՏԻՄՈԹԵԼՈՍ ԿՈՒԶԵՆ ՀԱԿԵՏԱՌՈՒԹԵԱՆ

ՀԱՅ ԹԱՐԴՄԱՆՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

ԵՒ

ՍՈՒՐԲԻ ԳՐՔԻ ԵՐՐՈՐԴ ԿԱՄ «ՆՈՐԱԲԵՐ»

ՀԱՅ ԹԱՐԴՄԱՆՈՒԹԵԱՆԸ.

1. Մեր տպարանից լոյս տեսաւ կարապետ և Երուանդ վարդապետների աշխատութեամբ և Սուքիաս արքեպիսկոպոսի ծախըռով «Տիմոթէոսի եպիսկոպոսապետի Աղեքասնդրեայ Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդովսի» շատ կողմերով նշանաւոր գրուածքը, որի երկաթագիր մագաղաթեայ հին ձեռագիրը չէր խուսափել Էջմիածնի մատենադարանում՝ աշխատող բանասէրների ուշադրութիւնից։ Դեռ 1892-ին հանգուցեալ աստուածաբան Արշակ Տէր Միքելեանի ուշադրութիւնն հրաւիրեցի իբրև մասնագէտի մի շարք աստուածաբանական—կրօնական կարեւոր անտիպների, ի թիւս որոց և Անանիա Մոկացունամակների և Կուզի այս կարեւոր գրուածքի վրայ, խորհուրդ տալով նրան նուիրուել այդ գործերի հրատարակութեանը նա նամակով խոստացաւ ինձ ձեռնարկել այդ գործին, այդ ժամանակ դտնւում էի ես Պարիղում, սակայն Էջմիածին պաշտօն ստանալով՝ վոխեց իւր աշխատութեան ծրագիրը և գլուխ բերեց Սամուէլ Անեցու հրատարակութիւնը, բաւականանալով այդ հրատարակութեան վերջում, բաւական խառնաշփոթ եղանակով, ծանօթութեանց մէջ թեթև ակնարկներ անելով այս և այլ անտիպների մասին։ (Անանիա Մոկացու մասին տես էջ 292, ծան. 46. Կուզի մասին էջ 292, ծան. 40). Տարիներ անցած՝ Անանիայի նամակներն հրատարակեցի Արարատում, իսկ Կուզի մասին՝ գրեց կարապետ վարդապետը, որոշելով գրուածքի կա-

ըեւորութիւնը, սակայն առանց հնարաւորութիւն ունենալու հրատարակութիւնը գլուխ բերել, մինչև որ Սուքիաս արքեպիսկոպոսի նպաստը և Երուանդ վարդապետի ջանասէր գործակցութիւնը վերջապէս գործը յաջողեցրին, եւ ահա մենք ունինք մեր առաջ մի ստուար հատոր՝ ՀՀՀՎ + 396, գեղեցիկ և խնամուած հրատարակութեամբ կուզի և նրա աշխատութեանը նուիրուած յառաջաբանը հրատարակիչների կողմից՝ լիովին և ամփոփ կերպով պարզում է գրողի, գրուածքի և հայ թարգմանութեան կարեորութիւնը:

2. Իմ նպատակս չէ այստեղ՝ այս կարեոր հրատարակութիւնը քննադատել, կամ ցոյց տալ այդ երկասիրութեան հայ կրօնական մատենագրութեան և մտածողութեան մէջ թողած մեծ ազդեցութիւնը և անջնջելի հետքերը, որոնց վրայ մասամբ մատնանիշ են լինում և հրատարակիչները, աւելի մանրամասն նոյն խնդրին վերադառնալը վերապահնելով իրենց և մի այլ յարմար ժամանակին թէե անցողակի պէտք է նկատել, որ Օձնեցուց, Խոսրովից համեմատութիւններ բերելիս (տ. յառաջաբան ՀՀՀ,) անհրաժեշտ էր աչքից չփախցնել և Ստեփանոս Իմաստափրի իմ հրատարակած պիտառութիւնը (Արարատ 1902, և արտատպութիւն), նոյն Մանազկերտի ժողովի շուրջը եղած կուսակցութեանց մէկից մեզ հասած ամենակարեոր վաւերագիրը՝ Հրատարակիչների ուշադրութիւնից վրիպել է ոչ նուազ կարեոր և աւելի հին (եօթներորդ գարու վերջից) դոկումենտը՝ Կայսերաց Պատմութիւնը, պահուած մեր հնագոյն ձեռագրերից (Ժ-Երորդդար) մէկում և այժմս արդէն հրատարակուած Հ. Սարգսեանի աշխատութեամբ, որի մէջ լիուլի արտացոլում է Տիմոթէոսի ազդեցութիւնը։ Համեմատիր, օրինակի համար, Ստեփ. Իմաստ. (արտատպ. էջ 13, Արարատ էջ 378) Տիմոթէոսից Յ հատուած, մէջ բերուած կիւրզի և Փիլաքսոնի միջև, կամ Տիմոթ. էջ 198 և Ստ. Իմաստ. էջ 26 (Արար. 391) կիւրզի «Յաղագս Կայծին» հատուածը ըառացի, Տիմոթէոս էջ 276 – Ստ. Իմաստ. էջ 26 Յովհաննէս կամ Յոհան

Եպիսկոպոսի «Հաւատոյ ճառից» հատուածը լառացի, Կայսերաց պատմութեան* թէոդոս վոքրին, Մարկիանոսին,

* Առիթից օգտուելով հարկ եմ համարում փարատել բազմաշխատ բանասէր Հ. Բ. Մարգսեանի տարակուսանքը: Մեր Գևորգեան ցուցակի թ. 102, հնագոյն թուղթ, երկաթաղիք Զ-ից է Վենետիկցիների ունեցած ընդօրինակութիւնը, 1836 թուին կատարուած, Հ. Սէթեանի ձեռքով: Սէթեանի ընդօրինակութիւնից է Հ. Մարգսեանի հրատարակութիւնը «Անանուն Ժամանակադրութիւն» վերնագրի տակ (1904, Վենետիկ): Մարգսեան անշուշտ սխալուում է՝ ժողովածուի տարրեր աղբիւրներից քաղած ժամանակադրական հաստուածները մի ամբողջական զրութիւն համարելով: Բուն կայսերաց Պատմութիւնը սկսուեմ է Վենետիկի հրատ. էջ 35 «Կայսերը Հռովմոց» վերնագրով: Դրանից առաջ եղածը՝ տարրեր աղբիւրներից հաւաքածու է. էջ 1—4 Խորենացուց է. էջ 4 սկսուում է Անդրէասի մասը, որի Հիպակողիաի հետ նոյնութիւնը առաջին անգամ մատնանշեց Գր. Խալաթեան, թէե Հ. Մարգսեան այդ մասին տեղեկութիւն չունի կամ դանց է առնում յիշել: Անդրէասի և Կայսերաց պատմութեան միջն կան այլ օտար պատառիներ, ժողովածուն կազմողից հաւաքուած: Կ. Պատմութիւնը եւ տարիներ առաջ ունէի պատրաստած տպագրութեան համար, բայց միջոցների պակասութեան պատճառով՝ գործը մնաց անտիպ: Սէթեանի ընդօրինակութիւնը կերծ չէ զանազան անյաջող վիրծանուած վրիպակներից: Բաւականանանք մի օրինակով. էջ 57, Հայոց զրի զիւտի հատուածում Հռովմանուր կարդացուած է Ստեփանոս, որն և մտել է ընագրի մէջ, չնայելով որ ուրիշ ձեռագրերից յայտնի է Հռովմանուր ընթերցուածը: Մեր երկաթաղիքը ոչ մի «Ստեփանոս» չունի: Անշուշտ այս աղբիւրից է ծագում՝ նաև կոնիքիրի սխալը, որ Լինչի «Սրմենիային» տալիս է հետեւալ տեղեկութիւնը. «The Armenian alphabet was imposed on Sahak (Isaac the Great) by Persian Government as a political device to estrange the Armenians both from Greeks and from Syrians. The only historical account is that of Anania of Shirak (unedited chronicle in an uncial Ms. at Mosh), who relates that the twenty-nine consonants were «arranged in order» by Daniel, a Syrian philosopher, and sent (during the reign of Theodosius the Less) to the Armenian Satrap Vakortsh by Viram Shapu the king by hand of the Elder Abel. The seven vowels were still wanted, and Mesrop received these from Hayek, a noble of Taron. Stephanus, a scribe of Samosata, incorporated these seven vowels among the consonants. Armenia by H. F. Lynch, vol. I, p. 312, n. 1. Այս

Դեռևս մեծին նույրուած գլուխները, մասնաւորապէս՝ տպագրի էջ 62 և Տիմոթէսս էջ 146, այն հատուածները, որտեղ գործ է ածուած եւտիքէսի ձեռնարկի համար լուտին-լոյն «Լըւբեղոն», Դեաւըեղովն», «ի ձեռն Նիբրեղանն» բառը Տիմոթէսսի իբրի աւելի խոր ազգեցութեան նմուշ կարելի է ցոյց տալ «Ով հրաշալի նախահարք» մորտական շարականի մէջ գործածուած նոյն իսկ իւր Տիմոթէսսի ասութիւնը բառ ուցի. «Ուրացան զՏէր ի Քաղկեդոնի»—«ի Քաղկեդոնի զՏէրն ուրացան» 36, 37. Հմմտ, և «Ուրացողքն ի Քաղկեդոնի զՏէրն» 35, 22, և այլուր Շարական, տուն 7-երորդ, տես ձեռ. շարակնօցներ, տղագրերի մէջ շարականի վերջին տները

տեղեկութեան մէջ Vakortsh-ը անշուշտ վահրինն է, «Ստովանուուր»—Հոռփանուոր. սխալը ծագել է Աւթեանի ընդօրինակութիւնից, մեր Զ-րն աղջատ է, բայց չունի Ստովանուուր իսկ աւելի խորհրդաւոր՝ Տարօնի իշխան Հայեկը անշուշտ Հացեկաց բառի սխալ ընթերցուածն է, կարդացուած Հայեկայ. «ի Հացեկաց Տարաւնոյ յազատ տանէ», որով Հացեկաց զիւղը դարձել է Հայեկ, ա ոօնե օր Տարօն Չափաղանցութիւնն է նաև՝ միակ պատմական տեղեկութիւն (այս բառերի անգղիերէնը իմ ստորագծածն է) համարել այս Անանուն Ժամանակադրութեան հազորդածը հայ զրի զիւափ մասին Անշուշտ պատմական են, և աւելի կանուխ ժամանակով՝ և բուն Կորիւնը (ընդարձակը) և Փարպեցին, մինչև իսկ որոշ չափով նաև Հարքացուզրի մասին առեղծուածը (տես իմ հրատ.)։ Շիրակացու զրութիւնների մի մասը հրատարակելիս «Կայսերաց Պատմութեան» յիշատակութիւն չանելս մի միայն այն պատճառով է, որ որի է հաստատուն կոռուան չկայ Շիրակունուն վերագրելու այդ աշխատութիւնը, ինչպէս որ այդ անում են նոր Հայեկ, Բառ, յառաջարան, Զարբանալւուն, Մարգսեան և ուրիշները։ Անյաջող հմ համարում նաև Մարգսեանի փորձը՝ և կամուտ յաւելուածներ համարել կ. Պ-եան հակաքաղիեղունական բազմաթիւ կտորները կայս. Պատ-ը ոչ միայն հակաքաղիեղունական է, այլ և ծայրայեղ միաբնակ—յուլիսանիտ. տես Ալիկառնասի Յուլիան եպիսկոպոսի մասին կ. Պ. էջ 69 և հետ.։ կ. Պ-ը շատ անգամ քաղուածաբար և հետզհեաէ կրծատուած. բայց ոչ երբեք ընդլայնուած, ձեռագրերում է սլահպանուած, որոնցից հնագոյնը և համեմատաբար ամբողջականը, ոչ առանց թերիների, մեր երկաթագիրն է։ Հմմտ, Հ. Մարգսեանի ուսումնասիրութիւնը «Անանուն Ժամանակադրութեան» յառաջ, և վերջարան, մասնաւորապէս էջ լգ, ծանօթութիւն։

դուրս են ձգուած խաղաղասիրական նկատումներով՝ Համեմատելու նիւթ շատ կայ նաև «Հաւատարմատներում» և գաւանաբանական վիճական դրուածքներում:

3. Անցնինք մեր յօդուածի բուն նիւթին, թարգմանչին և թարգմանութեան ժամանակին Կար, և Եր, վարդապետները ցոյց տալով Թղթոց Գրքի վկայութեամբ, որ հայ-վրական եկեղեցական վէճերի ժամանակ յականէ յանուանէ յիշւում է Տիմոթէսի այս գրուածքը, իրաւամբ թարգմանութեան ժամանակը դնում են եօթներորդից առաջ, և մի քանի այլ մասնը նշանների վրայ հիմնուած՝ ենթադրաբար աշխատում են կապել Արդիշոյ ասորու հետ, կամ թարգմանութիւնը վերագրել նրա ձեռներիցութեանն ու ազգեցութեանը (յառաջ. էջ ԽХIII): Վեցերորդ դարումն են ստեղծուած համարում «մեր եկեղեցական դրականութեան ամենահարուսա ճիւղերից մէկը» այն է դաւանաբանականը (էջ ԽХII): Հիմնուելով լեզուի ստըրկաբար յունաբանութեան վրայ, հնարաւոր են համարում թարգմանչին ենթադրել օտաշազգի, բայց շատ լաւ տեղեակ հայերէնին: Յատուկ անունների գրութեան զանազան ձեւերը կարծել են տալիս հրատարակիչներին «թէ թարգմանիչները մի քանի հոգի են եղել, ոմանք նոցանից թերեւս օտարազգիներ»: Ես չեմ գանում որ և է քիչ թէ շատ կշիռ ունեցող փաստ թարգմանչին օտարազգի համարելու. կամ մի քանի թարգմանիչներ ենթադրելու փոխանակ մէկին Յատուկ անունների գրութեան և ընդհանրապէս ուղղագրական տարբեր ձեւերը մեծ մասամբ առաջ են գալիս հետզհետէ ժամանակի ընթացքում արտագրողների գրչի տակ, բայց յաճախ պատկանում են նաև բուն թարգմանչին: Օրինակի համար Ղեւոն, Ղեռն ձեւերի փոխանակ՝ երկրորդ, տւելի նոր, Զիւը զործ է ածում Ղեւոն ձեւը, հարկաւ ոչ տարբեր թարգմանչի, այլ տարբեր գրչի արդիւնք, Եթէ ցոյց տրուէր որ, օրինակ, Ղեւոն ձեւը, գործ է ածում բայցաւաբար գրքի այս էջից մինչև այն էջը որոշ գլուխներում, իսկ Ղեւոն ձեւը բոլորին ուրիշ գլուխներում, այն ժամանակ թերեւս հնարաւ-

որ լինելը գրքի զանազան մասերն անշատել միմեանցից և վերադրել զանազան թարգմանիչների, բայց այդպիսի հիմունքը չունին հրատարակիչները իրենց ենթադրութեան համար։ Թէ յատուկ անուանց ձեւրի ինչպիսի այլազանութիւն կարող է երեան գալ նոյն գրողի գրչի տակից, միևնոյն դրում, առանց հեռու գնալու կարելի է օրինակ բերել իւր իսկ Երուանդ վարդապետի մի ուրիշ աշխատութիւնից^{*}, ուր լատին, յոյն, նոր գերման, հայ, հին հայ, պարսիկ ձեւրը շարուած են միմեանց կողքին, և հայ ականջի համար այնպիսի խորթութիւններ կան, ինչպէս են՝ Նեապէլ, Մալլանդ, Յոսիմոս, Փափդագոնիա և այլն և այլն կամ միևնոյն անունը գրուում է զանազան ձեւրով՝ Աբդիշօ, Աբդիշո, Աբդիշոյ։

4. ԸստՀանրապէս առած հրատարակիչների գլխաւոր թեղիսների հետ թարգմանչի և թարգմանութեան ժամանակի վերաբերեալ ես կհամաձայնէի, այս սահմանափակութեամբ, որ Տիմոթէոսը թարգմանուած է վեցերորդ դարու Երկրորդ կիսին, յոյն ընագրից, յունաբան լեզուով, առանց Երկրորդական ենթադրաբար ասուածներին առանձին կշռ ընծայելու։ Բայց բարեբախտաբար Տիմոթէոսի հայ թարգմանութեան մէջ պահուած է մի այնպիսի ճիշտ ժամանակաբանական ցուցում, որով հնարաւոր է ճշտիւ որոշել թարգմանութեան քառամետակը, և որով յեղաշրջուում են ոչ միայն համատարակիչների յառաջարանում յառաջ բերուած գլխաւոր թեղիսները, այլ և մեր, վերջին քառորդ դարում, հայագիտութեան մէջ մշակուած ընդհանուր հայեացքները, յունաբան դպրոցի, դաւանաբանաւ-

* Տես Քնդ. Եկեղ. Պատմութիւն. Ա. հատ. Եջմիածին 1908, քաղուածաբար կազմուած, նոր դիտական պահանջներին բոլորովին համապատասխան աշխատութիւն, չհաջուելով մի քանի անյաջող և անդգոյշ ասացուածները և տեղ տեղ անխուափելի մանր մունք սիսակներ։ Վերջիներիցս աչքի ընկնողը, հայերիս վերաբերեալը, պիտի ուղղել։ Բարդածանի ալյելած Անի ամրոցը ոչ թէ կարսի մօտի Անին է, այլ արևմտեան Հայաստանինը, Եփրատի աւազանում (տ. էջ 82)։

կան գէճերի շրջանի և յատկապէս՝ նրա սկզբնաւորութեան վերաբերեալ, Առաջ մի գարով ընդլայնւում է աեսութեան հաղիղոնը գէպի յետ և փոխւում է այդ խնդիրներին վերաբերեալ հարցերի հիմնակետը:

5. Կուղի գրուածքում, էջ 277, կարդում ենք պիտառութեան մի այսպիսի վերնագիր. «Երանելոյ Հաւը մերոյ Դիսուկորսի եպիուկապոսապետի Աղեքսանդրեայ և խոստովանողի՝ ի գրեցելոյ առ Սեկոնդինան թղթոյ ի Գանգրայ յեքսորաց *», ուր զ[ը]նթացսն կատարեաց ի Քրիստոս Թուղթ եւ մներորդ, Սեպտեմբերի երկրորդ, Հոռի վեցերորդ». Տիմոթէոսը, որ իւր «Հօրը», իւր մեծաւորին, այն է Դիսուկորսին՝ ընկերակցել էր և աքսորում, անշուշտ լաւ տեղեակ էր Դիսուկորսի թղթերին, և այս պիտառութիւնը բերելիս պահել է թղթի գրութեան ամիսն ու ամսաթիւը՝ Սեպտեմբերի 2։ Ակներին է որ հայ թարգմանչինն է համապատասխան հայ ամսաթիւը՝ Հոռի վեց։ Հայ հին տարին շարժական էր, այսինքն միշտ կազմուած էր լինում 365 օրից և նահանջ տարիներին յետ էր մնում կամ գէպի յետ շարժում՝ մի օրով յուլիսան տարուց։ Ո՞ր թուականին կարող էր հայ հոռի ամսուայ վեցը ընկնել սեպտեմբերի երկուսին։ Այդ այնպիսի մի տարի պիտի լինէր, երբ նաւասարդի մէկը ընկնում էր յուլիսի 29-ին, եւ յիրաւի նաւասարդ 1=յուլիս 29, նաւ. 3=յուլ. 31, նաւ. 30=օդոստոս 27, հոռի 1=օդոստ. 28, հոռի 4=օդոստոս 31, հոռի 6=սեպտ. 2։ Այսպիսի տարրական մանրամասնութեանց մէջ եմ մտնում այն բանասէրների համար, որոնք տեղեակ չեն տոմարական դիտցիալինային։ Նաւասարդի 1-ը յուլիսի 29-ին է հանդիպում միմիայն 480—483 փրկչական թուերին։ Եղած ցանկերից, որտեղ արւում

* Հրատարակիչները «յեքսորաց» ուղղում են «յաքսորաց», բայց անտեղից Եքսորի, Եքսորիք, Եքսոր, Եքսորք, Եքսորել ձեւերը տառացի համապատասխանում են յունականին՝ չէօրէ, Խոկ ակսօրի ձեն է, տես Արմ. Gram. ուրեմն բառն ունինք Երկու ձեռվ, ուղղակի յունարէնից փոխ առնուած Եքսորի, նոյնը ասորական ճանապարհով եկած՝ աքսոր։ Արմ.-ին անծանօթ է հայ Եքսորի ձեւ-

է նաւասարդի 1-ի հանդիպումները, լաւագոյնն է Դիւլորիք-ինը (Recherches sur la Chronologie Arménienne, Paris 1859, էջ 383. Աւելի կանուխ է կազմուած, բայց սխալների պատճառով անդորթածելի է՝ Խաչ. վ. Սիւրմէլեանինը (Տօմարագիտութիւն, Վենետ., 1818), որից կան և արտատպութիւններ զանազան «էֆիմերտիական» հրատարակութեանց մէջ («Ասկի բարեկամ» Թիֆլիս, մի քանի տպագր, և այլն):

6. Մեզ հետաքրքրող թուականի կարեսրութեան պատճառով, և կարելի սխալից խուսափիելու համար, նաւասարդ 1-ի յուլիսի 29-ին հանդիպումը վերասառուգում եմ նաև սասանեան տոմարով. Խնդրին ծանօթներին յայտնի է, որ պարսիկ նոր տարին մեր նաւասարդ 1-ից հինգ օր առաջ է։ Հայ բանաօէրի յիշողութեան դիւրութեան համար կարելի է ձեւակերպել այսպէս. սասանեան նոր տարին ընկնում է մեր Աւելեաց մէկին. Նեօլդ-քէն տալիս է սասանեան նոր—տարիների ցանկը (Tabari, Anhang B.): 480—483 գրիլ. թուականին, ըստ այդ ցանկի, սասանեան նոր—տարին հանդիպում է յուլիսի 24-ին. (= հայ Աւելեաց 1) որին աւելացնելով 5 օր՝ ստանում ենք յուլիս 29—հայ նաւասարդ 1-ին։

7. Կարելի է հաշուել և առանց պատրաստ ցուցակի։ Պէտք է վեր առնել մի հաստատուն զուգաւորութիւն հայ և լատին ամսաթուի և հաշուել դէպի յետ։ Միջին և վերջին դարերում այդպիսի զուգաւորութեան անհամար օրինակներ ունինք յիշատակարաններից։ Դիւրութեան համար պէտք է վեր առնել մեր որոնած թուականին ըստ կարեւույն մօտիկ մի զուգաւորութիւն։ Այդպիսի մի հաշիւնիմ արած եօ վեցերորդ դարու կիսին Յիզրուրուզիտինահատակութեան օրը որոշելու համար։ Սուրբ նահատակուել է «ի քսաներորդի երրորդի ամին Խոսրովու թագաւորի, որ օր երկու էր քաղց ամսոյ, յաւոք կիւրակէի, յերրորդ ժամուն։ 8ես այս թուականի վերլուծութիւնը իմ «Գրիգոր—Մանաճիհը Ռատիկուում, էջ 7—8, կամ Արարատ 1902, 468—474։ Այս ճշտուած հաշուով 553-ին նաւասարդի 1-ը ընկնում է յուլիսի 11-ին, և որովհետեւ

նաւաս, 1-ը տեղափոխում է իւրաքանչիւր քառամեակ՝ նահանջից նահանջ, ուստի այդ յուլիս $11=1$ նաւասարդի՝ 552—556 քառամեակին է վերաբերում Մեղ հետաքրքրող 480-ից մինչև 552-ը 72 տարի է ($21+51=72$), կամ 18 քառամեակ ($4 \times 18 = 72$): Իւրաքանչիւր քառամեակին նաւասարդ 1-ը շարժական թուականում յետամեացութեամբ պիտի տեղափոխուէր մի օր, 18 քառամեակներին՝ 18 օր, եւ յիւատի՝ տեսնում ենք՝ որ 480 թուի յուլիսի 29-ից նաւասարդ մէկը իշնում է 552—555 թուին՝ յուլիսի 11-ին, այն է յետագիմում է 18 օր ($29 - 18 = 11$):

8. Ուրեմն ապա հովապէս կարելի է համազուած լինել, որ սեպտ. 2—հոռի 6 զուգաւորութիւնը կարող է հանգիպել միմիայն 480—483 քառամեակին: Եւ որովհետեւ ամսաթուերի զուգաւորութեան փոփոխութիւնը չէ կախուած ոչ յուլեան տարու և ոչ հայ շարժական տարու սկզբնաւորութիւնից, ինչպէս որ համարողներից նոյն իսկ լաւագոյնները անուշադրութեամբ անում են այդպիսի սիսալ, այլ յուլեան նահանջի մի յաւելեալ օրից, այն է փետր. 29-ից, ուստի մեզ հետաքրքրող քառամեակի ճշշտադոյն սահմաններն են 480 փետր. 29—484 փետր. 28: Ահա այս քառամեակն է Տիմոթէոս Կուղի հայ թարգմանութեան հաստատուն և անխախտելի թուականը:

9. Կասկած յարուցանելու ուրիշ որ և է ճանապարհ պակասում է: Թերեւ մէկը իրեն թոյլ տայ ենթադրել, թէ հայ թարգմանը հոռի վեց գնելով կամեցել է հաշուել ոչ իւր թարգմանութեան, այլ Դիոսկրոսի Պեկունդինանին գրած թղթի ժամանակը: Բայց այդպիսի հաշուի համար պակասում են անհրաժեշտ պայմանները: Միմիայն «սեպտ. 2» ունենալով անհնար է այդպիսի յետագարձ հաշիւը, անհրաժեշտ էր ունենալ նաև թղթի գրութեան տարեթիւը: Բայց թոյլ տանը ենթադրել նաև, որ թարգմանին ուրիշ աղբիւրից յայտնի էր և այդ տուեալը, այն է թղթի տարեթիւը: Այս ենթագրական դէպքումն էլ անհնար էր հոռի վեցը զուգաւորել սեպտեմբերի 2-ին: Դիոսկրոսի մահուան թուականը մեզ յայտնի է: Նա մեռաւ աքսորում Պափ-

զագոնիայի Գանդրայ քաղաքում 454-ին^{*}, Նրա մեղ հետաքրքրող թուղթը կարող էր ուրեմն գրուած լինել ոչ ուշ այդ 454-ից, 452—455 քառամետակին նաւասարդի մէկը հանդիպում էր օգոստոսի 5-ին, ուրեմն սեպտեմբերի 2-ը ընկնում էր նաւասարդի 29.ին, մինչդեռ հոռի վեցը հանդիպում էր սեպտեմբերի 9-ին, ուրեմն և անհնարին էր «սեպտ. 2=հոռի 6» զուգաւորութիւնը»

10. Կամ թերեւս հնարաւոր համարուի ենթագրել, որ «հոռի վեց» ասացուածը ուշ ժամանակ, մի 50, 100, կամ աւելի տարիներ յետոյ, աւելացրել է որ և է գրիչ կամ համարող։ Այդպիսի յետադարձ հաշիւների օրինակներ ունինք։ Օրինակ՝ հայ շարժական թուականով յետադարձ հաշուած է Քրիստոսի ծննդեան օրը, թէ որ հայ ամսի քանի երսորդ օրը կհանդիպէր։ Բայց այսպիսի հաշուի համար բոլորովին անբաւարար է «սեպտ. 2» տուեալը, անհրաժեշտ էր ունենալ նաև տարեթիւը որ և է թուականով։ Եւ յիրաւի՞ սեպտեմբերի 2-ը հայ որ ամսի և քանիսին է հանդիպում հարցմանը, ոչ մի համարող պատասխան տալ չէ կարող, որովհետեւ այդ կարող է հանդիպել հայ շարժական բոլոր ամիսներին և բոլոր օրաթուերին։ Ուրեմն այսպիսի ենթագրութեան ճանապարհն էլ փակուած է».

11. Կարող է լինել ուրիշ կառկածի տեղիք, արդեօք մեղ համար կարեօր ընթերցուածը՝ «հոռի վեց»՝ անաղարտ է հասել մեղ, չէ աղճատուած։ Բայց այսպիսի հարցմանը

* Տես և Կայսր. Պատմ. 66. «զԴիսսկորոս եպիսկոպոս նախի կիւղիկոն աքսորեցին, ապա յերակղեայ, ապա ի Պափղագովնիա, և անդ կատարեցաւ բարի վկայութեամբ և խոստովանութեամբ ի Քրիստոս ։ Տիմոթէոսի մասին ուշադրութեան առնելու է և հետեւալ տեղիկութիւնը. «Յետ սրոյ (—Պառակրայ, եպիսկոպոսին. Աղնքասանդրիայ) յաջորդէ զաթոս եպիսկոպոսութեանն Տիմոթէոս երանելի և հաստատէր յուղափառութեան հաւատս զկործանեալթ ի Պառակրայ (—Պառակրայ); Դեռի մնձ [թագաւորէ] ամս ինն և առանք ի սորա երրորդ ամին՝ Տիմոթէոս և Անատողի նորին եղբայր յափշտակեալ ի Սիղասկոսէ աքսորեցան ի Քերտովն, վասն չընդունելոյ զսահման Քաղկեդոնի ժաղովոյն» (Կայս. Պատմ. էջ 67.)

բանասիրական գիտութեանց մէջ պատասխան չկայ։ Հարկաւ, եթէ որ և է նորագիւտ աղբիւր փոխէ այդ ընթերցուածքը՝ այդ նորութեան հետ կարող է փոխուել և եղարակացութիւնը։ Բայց բացառիկ բարեբախտ ութեամբ մեզ հասել է այդ կարեւոր ընթերցուածքը ոչ միայն հնագոյն երկաթագիր ընտիր ձեռագրում, այլ ունինք նոյնը պահուած և մի ուրիշ նորագոյն*, բայց մեր երկաթագրից անպայման անկախ ձեռագրում, մեր մատենագարանի № 454 (կար.), տես Տիմոթ. էջ 335, Այդ ձեռագրում՝ կարգում ենք մեր վերեւում մէջ քերած հատուածը այսպէս։ «Երանել[ւ]ոյն հաւըն մերոյ Դիտոկարոսի եպիսկապոսապետին Աղէքսանդրու և [խոստովանողի ի] գրեցելոյ թղթոյն ի գանգրա[յ] յասորիս, ուր զաշակերտսն կատարեաց ի Քրիստոս, թուղթ է-երդ. սեպտեմբերի Բ, հոռի վեցերորդն, | տռ միայնակեացան ի հենատոն գրեցեալ թղթոյ.» Աւզանկիւն փակագծերով իմ աւելացրածներն են նորագոյն ձեռագրի բաց թողած մասերը։ Եղագրածները ձեռագրական մանր տարբերութիւններն են։ Աւզանկայեաց գծիկով բաժանուած վերջին աւելի մասը՝ «առ միայնակեացոն ...»

* Կար, և Եր. վարդապետների հրատարակութեան թոյլ կողմերիցն է այն, որ նրանք աւելորդ են համարել իրենց զործածած ձեռագրերի դռնէ ամփոփ նկարագիրը և այլ հանգամանքները (տիփ կազմութիւն, ժամանակ, գրչութիւն և այլն) տալ մեզ. քանի որ այդ տուեալներն անհրաժեշտ են ուսումնասիրողին, և շատ սննդամ անսպասելի լրյօն են սփոռում վիճելի հարցի վրայ։ Հրատարակիչները գոռում են նաև կէտադրութեան մասին Փակագծի () և ? հարցական նշանի ինչ դէպքերում և արդեօք միատեսակ գործածութիւնը շատ անորոշ է և իրաւամբ տեղիք է տալիս ընթերցողին թիւրիմացութեան կամ տատամասութեան մէջ ընկնել Աղագայ հրատարակութեանց մէջ անհրաժեշտ է այս թոյլ կէտերին տոանձին ուշադրութիւն դարձնել ։ Շատ լաւ է կազմուած ո, զրոց վկայութեանց ցանկը, վատ չեն նաև յդտուել անուանց և նիւթերի ցանկը, հարկաւ ոչ զերծ անխուսափելի թիւրիներից և վրիտակներից։ Օրինակ՝ մնալ հետաքրքրող գրքիկ վերնագրից՝ ցանկերում չպատճեռ Անդամներ, ոչ Հոռի, ոչ Հենատոն, Ցանկերում յատուել ուշադրութիւն է դարձնելու ամիսների անուններին, որոնցից շատ անգամ կախուած է լինում զրութեան բախտի որոշումը։

թղթոյ» առնուած է ուրիշ վերնագրից (տես Տիմոֆ. էջ 279): Ուշագրաւ տարբերութիւն է «յասորիս, ուր զաշակերտուն» ընթերցուածը, սինչդեռ երկաթագիրն ունի «յեքառաց, ուր զ[թ]նթացման» ինձ թւում է որ նորագոյն ձեռագրի հին նախագաղափարը, հարկաւ ոչ անմիջականը, ունենալու էր «ի գրեցելոյ թղթոյ ի Գանգլայ յեքսորիս, ուր զարշաւանսն կատարեաց ի Քրիստոս»: Եքսորիս յոյն բառից ունինք հայերէն եքսորի, եքսորիք*: Իսկ «զարշաւանսն կատարել» ինչպէս «զընթացման կատարել» նշանակում է մեռնել: Համեմատիր «զընթացս կատարել» Տիմ. էջ 1 և 277: «Զարշաւանսն կատարել» բացի մեր այս ենթագրածից տես նաև Տիմ. էջ 147, «և լուծին, որպէս կարծեցին, զերանելին մեր հայր և եպիսկոպոսապետ Դիոնիսոս . . . և արտասահմանելով զնշաբտապէս պահապանն հաւատոյ ի Կիւզիկոն նախկին, ապա յերկաղեա, յետ այսորիկ ի գանդրացւոցն քաղաք, ի Պափղագոնիա, աստ ուր զարշաւանսն կատարեաց և զհաւատն պահելով կատարեցաւ, ընդունելով զարդարութեանն պսակ առ ի նահատակագրէն Քրիստոսէ, յարդար դատաւորէ, ընդ ամենայն սուրբս»: (Հմմտ. Կայս. Պատմ. էջ 66): Անհմուտ արտագրողների ձեռքի տակ անհասկանալի «յեքսորիս» կամ «յեքսորս» բառը սխալագրուել է «յասորիս», իսկ «զարշաւանսն կատարեաց» նոյնպէս անհասկանալի ոճը՝ «զաշակերտոն կատարեաց» անյաջող սրբագրութեամբ փոխարինուել: Մեր երկաթագերը չերը չեր կարող նոր ձեռագրի նախագափարը լինել քանի որ չունի «զարշաւանսն» բառը, այլ դրա փոխարէն, հաւանականօրէն լուսանցքագրութիւնից մտած, ուելի հասկանալին «զընթացման»: Զնայելով այս բոլոր աղճատումներին, այսուամենայնիւ նոր ձեռագիրը անաղարտ պահել է

* Տես յատկապէս Սոկրատ մեծ. «Քանզի Փոքր ինչ յառաջ և այ ի յարդարմանէ արիանոսացն ի յեխորիս առաքէր» էջ 171. «ոմանց արտաքսիլ և առաքիլ յեխորիս» 183. «Փոքր ինչ յետոյ յեքսորեայն կոչեցեալ» 184. «զոմանս հատանէր յոտից (=բառնայրի միջոյ) ի ձեռն եխուեաց» 179, յաճախէ պատահում նաև բայաձելը «եքսորել»: Սոկր. Սքոլ. հրատ. Մեսրոպ վարդապետի:

մեզ համար «սեպտ. 2=հոռի 6» զուգաւորութիւնը:

12. Մեր այս բոլոր ապացոյցներին կարող է լինել մեր կարծիքով, մի վերջին, բայց քիչ թէ շատ կշիռ ունեցող առարկութիւն, այն է թէ՝ մեզ կոռուան ծառայող զուգաւորութիւնը թերեւ ոչ շարժական տոմարով է, այլ որ և է անշարժ սիստեմի վրայ է հիմնուած։ Մի տասնեակ տոմարական սիստեմներից, որոնք որ և է շանս կարող էին ունենալ իբրև եկեղեցական անշարժ տոմար գործածուած լինել հայերիս մօտ, հինգ և վեցերորդ դարերուամ, և ոչ մէկը չէ սկսուամ յուլիսի 29-ից։ Անշարժ տոմարն ունենում է և անշարժ սկզբնակէտ։ Եթէ յուլիսի 29-ի վոխանակ Տիմոթէոսի թարգմանութեան զուգաւորութիւնը տար 25, 29 կամ 30 օգոստոսի, կամ 1 սեպտեմբերի, կամ 1 հոկտեմբերի, կամ 1 յունուարի, կամ 21 կամ 22 փետրուարի և այլն, այն ժամանակ գործին ծանօթ տոմարագէտը կարող էր որ և է կասկածով կանգ առնել մի ոյզպիսի հնարաւորութեան վրայ, ենթագրելով եղիպտական, կապագովկական, բիւզանդական, ասորամակեդոնական կամ մի այլ անշարժ սիստեմի աղդեցութիւն։ Բայց 29 յուլիսին, իբրև անշարժ սիստեմի ելակէտ, նոյն իսկ նուողագոյն հաւանականութեան սահմաններից դուրս է վանում մի այլպիսի ենթադրութիւնը։

13. Ի վերջոյ մնում է ինձ աւելացնել մի ուրիշ գիտողութիւն։ Տիմոթէոսը իւր պիտառութիւնները քաղելիս երեսմ է որ խնամքով մէջ էր բերում գործածած գրուածքների վերնագրերը, յատուկ ցուցումներով թէ ինչ հատուած որ գրութիւնից է առնուած, շատ անգամ առանց զանց առնելու և գրութեան ժամանակաբանական ցուցումները (առլեթիւ, ամսաթիւ), իւր եպիսկոպոսի՝ Դիոսկորոսի, նամակից քաղելիս պահել է գրութեան ամսաթիւը (սեպտ. 2), բայց այդ միակ ժամանականից ցուցումը չէ, Ուշադրութեամբ թերթելով պիտառութեանց վերնագրերը ինձ յաջողուեց գտնել և հետեւեալ թուականները, որ գատելով կէտագրութիւնից և մի տեղ նաև բառերի անիմաստ յետևառաջութիւնից՝ իբրև թուական չեն հասկացուել հրա-

տարակիչներից։ Դնում եմ այդ թուականով վերնադրերը ժամանակի կարգով։ Բոլորն էլ Աթանասի զատկական տաւնականներից են, որով ճշտիւ որոշում են Աթանասի այդ գրութեանց տարեթուերը։ Տաղարի կէտադրութիւնը չեմ պահում, այլ փոփոխում եմ ըստ իմաստի, իմ հասկացած ձևով։

1. «Երանելոյ Աթանասի եպիսկոպոսապետի Աղեքանդրեայ ի տաւնականի երկրորդում։ Դիոկղետիանոսի ԽԶ» (Էջ 140)։

2. «Նորին՝ Գ* տաւնականէն։ Դիոկղետիանոսի ԽՀ» (Էջ 140)։

3. «Նորին՝ Հինգերորդ տաւնականէն։ Դիոկղետիանոսի ԽԹ» (Էջ 140)։

4. «Նորին՝ ի տաւնականէն **։ ԾԴ Դիօկղետիանոսի» (Էջ 118)։

5. «Նորին՝ ի տաւնականէ ԺԱ. երորդէ։ ԾԵ Դիօկղետիանոսի» (134)։

6. «Նորին՝ ԺԱ. տաւնականէն։ Դիօկղետիանոսի ԾԵ» (Էջ 141)։

Երկու տեղ (№ 3, 5) Դիօկղետիանոսէ ընթերցուածը ուղղեցի Դիօկղետիանոսի։ № 3-ը տպագրում բառերի յետեառաջութեամբ այսպէս է. «Խթ. նորին հինգերորդ տաւնականէն Դիօկղետիանոսէ» որ ըստ իմաստին տեղափոխեցի։ Եկեղեցական հայրերից յաճախ գործածուած այս թուականի սկիզբն է Դիօկղետիանոսի առաջին տարին, այն է 284։ Թուականի սկզբնաւորութիւնն է եղիպտական

* Իմ կարծիքով պիտի լինի Գ, տպագրում Գ է, ուրեմն Գ և Գ առանձին շփոթութիւն։

** Պարասում է տօնականի համարը, որ գատելով Դիօկղետիանուկանից պիտի լինի Ժ, Եթէ ենթազրել որ ընդհատումներ չեն եղել՝ կարելի է պարականդնել տօնականների համարները Դիօկղետիանուկանից համեմատ այսպէս։ [Ա. տաւնական ԽԵ թուին], Բ տօնակ. ԽԶ թուին, Գ տաւնակ. ԽՀ թուին, [Դ տօնակ ԽԲ թուին], Ե տաւնակ. ԽԹ թուին, [Զ տաւնակ. Ծ թուին, Է տաւնակ. ԾԵ թուին, Բ տաւնակ. ԾԲ թուին, Թ տաւնակ. ԾԳ թուին], Ժ տաւնակ. ԾԴ թուին, Ժ տաւնակ. Ծ թուին, Է տաւնակ. ԾԵ թուին, Ժ տաւնակ. ԾԵ թուին։

շարժական տարով 17 սեպտեմբերի, իսկ անշարժով, որ գործածութիւնից գուրս վանեց շարժականը և միակ տիրողը դարձաւ՝ սեպտեմբերի 29. Այս թուականի հետ է կապված եգիպտական զատկական տօմարը։ Այս թուականը կոչում է նաև Մարտիրոսաց թուական, Դիոկղետիանոսի 19-դ տարում աեղի ունեցած մեծ հալածանքների պատճառով։ Մեր ունեցած ամենականուխ թիւը՝ Դիոկղետիանոսի ԽԶ՝ համապատասխանում է փրկչական (46+283) 329—330, բայց որովհետև տօնականի, այն է զատկական թղթի հետ է կապուած, ուստի և համապատասխանում է 330 թ. զատկին։ Այս երկրորդ տօնականի թուականն է, ուստի և առաջին տօնականինը, որից հատուած չունինք, պիտի լինէր 329 զատկին։ Այսպիսով միւս թուերը համապատասխանում են հետեւեալ փրկչ։ տարիներին, բոլորն էլ զատկին։ ԽԵ=331, ԽԹ=333, ԾԴ=338, ԾԵ=339. Ռւշագրութեան արժանի է որ տօնականների համարները տարի տարի համապատասխանում են թուականի յառաջնազարցութեանը, որով կարելի է հետեւյնել, որ տօնական Ա—ԺԱ՝ տարի տարի ընկնում են 329—339 թուերին, որով և Աթանասի եպիսկոպոսութեան տարին պիտի լինի 329 թ. զատկից առաջ, բայց 328 թ. զատկից յետոյ։ Loofs-ը Աթանասի եպիսկոպոսանալու տարին դնում է 326-ին, բայց Լոֆուի գրութիւնը ձեռքի տակ չունենալով, անկարող եմ վերաստուգել նրա հիմունքները, որն և մեր այս յօդուածի նպատակից գուրս է*։ Ասորերէն պահուած են Աթանասի զատկական տօնականներից 13 հատ «յառաջաբանով» 329—348 թուերից։ Յունարէն կան հատուածներ։ Հմմտ. W. Moeller, Lehrbuch der Kirchengeschichte², 1899, էջ 438։ Այս թուերը շատ կարևոր՝ Աթանասի կենսագրութեան և թղթերի ժամանակաբանութեանը, Տիմոթէոսի գրութեան և թարգմանութեան ժամանակի համար նշանակութիւն չունին։

* H. Weingarten (Leipzig, 1897 Zeitafeln etc.) Աթանասի եպիսկոպ, տարիները դնում է 328 յունիս 8—2 մայիս 373. իսկ 15 զատկական թղթերը 329—348-ին։

14. Այսպիսով հասնում ենք հետևեալ եղբակացութեանը։ Տիմոթէոսի Հակաճառութիւնը՝ ունենալով սեպտ. 2=հոռի 6 զուգաւորութիւնը հայերէն թարգմանուել է 480 փետր. 29—484 փետր. 28 քառամեակին, երբ յիրաւի կարող էր տեղի ունենալ ամիսների և ամսաթուերի այդպիսի զուգաւորութիւն։ 480 թուից՝ 1460 տարի յետոյ (ըստ յուլեան տոմարի), ըստ հայ շարժականի՝ 1461 տարի յետոյ) միայն կարող է նորից հանդիպել այդպիսի զուգաւորութիւն, այն է՝ 1940-ին, մի գալիք տարեթիւ որին մենք դեռ չենք հասել. կամ 1460 տարի առաջ կարող էր նոյնը պատահել՝ Քրիստոսի ծննդից 1000 տարուց աւելի առաջ, երբ պատմական Հայաստանում ոչ հայ կար և ոչ էլ հին հայ ամիսների անունները գոյութիւն ունեին հայոց ժօտ, քանի որ այդ անունները մեծ մասամբ պարսիկ ծագումից են, և փոխ են առնուել հայ և պարսիկ ցեղերի միմեանց հետ շփման գալուց յետոյ։

Այս զուգաւորութեամբ առաջին անգամ ունենում ենք, հինգերորդ դարից, մաթեմատիկորէն ճշտուած քառամեակ գրական աշխատութեան, որով և գրւում է առաջին հաստատուն հիմնաքարը մեր գրականութեան ապագայ ճշգրտուած ժամանակաբանութեանը, այն է՝ քրոնոլոգիայի, որ հայագիտական բոլոր ճիշդերի ամենաթղթլ կողմն է, մասնաւորապէս ինչ վերաբերում է հին դարերին (V—X):

* *

*

15. Վերջացնելով ժամանակի խնդիրը մի վերջին դիտողութիւն։ Նպատակո չէր կանգ առնել Տիմոթէոսի թարգմանութեան լեզուի վերայ, որ աժանի է յատուկ ուսումնասիրութեան *։ Յունաբանութեան հետ միասին

* Ուստի և կանգ չեմ առնում՝ նաև հրատարակիչների աշխատավաճած՝ (դնում են հարցական)՝ Զ-րի տեղ տեղ կասկածելի ընթերցուածների վրայ, որոնցից օրինակ, էջ 9³, 4. տօմ փականաց

բաւական բազմաթիւ նոր բառեր, ինչպէս օրինակ՝ լոյշտաղան (Էջ 281, 26), կամ բարբառական ձևեր ինչպէս՝ նոշաւ (մի քանի անգամ) փոխանակ նոցա (հմմտ. գնոց, գնոջ), յաճախ աշխահ փխ. աշխարհ ^{**} և ուրիշներ անկարող են չգրաւել ընթերցողի ուշադրութիւնը. բայց յատուկ մտադրութեան արժանի է Ա. Գրքի հատուածների լեզուն. Եւ իրաւամբ նկատում են հրատարակիչները, որ «խորթ է մանաւանդ այն հանգամանքը, որ Ա. Գրքի կտորները փոխանակ դասական թարգմանութիւնից ընդօրինակելու, նորից թարգմանել են՝ Եղնիկից հաղիւ մի դար ժամանակով բաժնուած, Եղիշէին գրեթէ ժամանակակից մարդոց համար՝ օտարութիւն մի բարբառով, նոյն իսկ բառակազմութեան մէջ այնքան ստրկօրէն մօտ յունարէնին, որ կարելի է ենթադրել, թէ թարգմանողը օտարազգի է եղել միայն շատ լաւ տեղեակ հայերէնին» (յառաջաբան ՀՀԻ). Ինչպէս տեսանք թարգմանչին օտարազգի համարելուն ես համաձայն չեմ: Բայց Ա. Գրքի, մանաւանդ նոր կտակարանի (տ. Ա. Գ. վկայութեանց ցանկ, 3 էջ հին կտակ. 9 էջ նոր կտակ.) այդպիսի տառացի յունաբան նոր թարգմանութիւնը և դասական թարգմանութեան անտես առնելը իսկ որ մի կարեւոր երեսոյթ է, կարոտ բացատրութեան: Հարկաւ կարելի է ենթադրել, որ օտարութեան մէջ թարգ-

թւում է ինձ, թէ պիտի կարդալ մօմ փականաց, ինչպէս ունինք մամ կենոյ և նման ասութիւններ: Մ և Տ երկաթազրի սովորական շփոթութիւն է, թէն ոչ Տիմոթէոսի մերձեռազրինը (տես երկու էջ լուսատիպ զրբի սկզբում, ուր Տ և Մ շատ որոշակի տարրերւում են), այլ հաւանականաբար աւելի հնագոյն նախագաղափարից: Էջ 45, 26, «յամենայն Եղիպտոսի, Եղիպտէ (?) և ի Պաղիստինէ». Հարցականով բառը կարդալու է «և ի Ղիրիէ»: Հրատարակիչները ցանկում եւղիպտէ դուռմ են իրրե Եղիպտոսի մի ուրիշ ձև, բայց Եղիպտոսի հետ կապ չունի, քանի որ Եղիպտոս յատուկ յիշուած է: Մերառաջարկած սրբագրութեան համար հմմտ. էջ 150, 54, «որ եկեղեցի ոչ սկայ յԵղիպտոս և ի Ղիրիէ և յԱրեկլու»:

** Օրինակ՝ Ցովինաննու Սւետարանից . . . «զամենայն մարդ եկեան յաշխահ. յաշխահի էր և աշխահ նովաւ եղեւ և աշխահ զնա «զիտաց» Տիմոթ. էջ 297, ⁵—₇.

մանը ձեռքի տակ չունէր հայերէն Ա. Դրքի օրինակ, բայց հազիւ թէ թւում է ինձ թէ լինելու է աւելի խոր պատճառ։ Դաւանական քրիստուարանական վէճերին անհրաժեշտ էր մանուածապատ և նրբին երանգաւորութեանց համար ոչ միայն նոր տերմինութիւն, այլ և Ա. Դրքի բնագրից տառացի ճիշտ կոչումներ, հիմնուած յոյն բնագրի վրայ, որից և հետեւում էր նոր թարգմանութեան անհրաժեշտութիւնը։ Սահակ—Մեսրոպեան ասորերէնից «փութանակի» կատարուած թարգմանութիւնը, ով հայ Ա. Դրքով զբաղուողներից կոչում է առաջին թարգմանութիւն, թէ յետոյ ուղղուած և վերաստուգուած յոյն լաւ բնագրի վրայ (=երկրորդ թարգմանութիւն), համարուելու էր անբաւարար։ Խորենացին մի այդպիսի ակնարկութիւն ունի «զոր (=զստոյդ օրինակս գրոց) առեալ մեծին Սահակյ և Մեսրոպայ՝ դարձեալ թարգմանեցին զմի անգամ թարգմանեալն փութանակի, հանդերձ նորօք վերստին յօրինեալ նորոգմամբ։ Բայց քանզի անգէտք էին մերում արուեստի, ի բազում մասանց թերացեալ գործն գտանէր . . .» Գ, 61.

16. Կային դասական հին բայց վերանորոգուած [=երկրորդ] թարգմանութիւնը ոչ միայն թերացեալ, այլ և գլխովին անընդունելի համարողներ։ Դանէ այդպիսի մի կարեօր վկայութիւն ինձ յայտնի է իմ հրատարակած «Հերձուածոց գրքի» մի աւելի հին օրինակից (Խաչիկ վարդապետի հաւաքածու, № 77, Սամուել Անեցի և Հերձ. գիրք, գրութեան թուականն է հայոց ԶԿԲ (764+551=1315))։ Ահա այդ հատուածը.

«ՃԾԶ, Մայրագոմացւոց աղանդ ընդ [=ըստ] Ապողինարի(ն) հերձուածողի անտարէնութեանն երեեցաւ, և աւելի ևս սոցա [սոցայն անօրէնութիւն], զկիրս մարդկային մարմնոյն Քրիստոսի ոչ ընդունին, մանաւանդ զթըւ փատութիւնն, զերկիւղն, զահաքրտնութիւնն, զքաղցն, նաև զխոնարհական բարբառն որ վասն Քրիստոսի, այլ եւ զհին թարգմանութիւնս զոր ընգալաք ի պըսոյն Սահակյ ոչ ընդունի[ն], և զերբորդ թուղթն կորնթացւոց ի Պաւղոսէ-

գրեալ, զընզալեալն ի սրբոյն Գրիգորէ, նզովեն, և զչարչաւրանսն սոոկ աստուածութեանն տան և ոչ միաւորութեան տնաւրենութեանն»:

17. Այս բոլորը քաղուած է թւում Թէոդորոս Քըռթենաւորի «Բնդդէմ Մայրագումացոյն» ճառից (Վենետ. 1833), ուր գտնւում են մեր մէջ բերած հատուածի բոլոր մասերը աւելի մանրամասն, թէե աւելի մութ, Քոթենաւորից բերում ենք հին և նոր տարբեր թարգմանութեանց խնդրին վերաբերեալ գլխաւոր կտորները.

— «Ոչ, ասեն, տկարութեամբ, այլ կարողութեամբ յաղթեաց (Յիսուս) մարտի թշնամւոյն. իւրական վկայեն բանքն, «Ոչ աւարի տուն սկայի, եթէ ոչ նախկին հզօրն կապի» (Մարկ. 4, 27), եւ եթէ այս ճշմարիտէ՝ յայտ է, ասեն, թէ անընդունակ է առաջնարզմանութիւն աւետարանին, որ յաղօթակայութեանն զահաքրտնութիւնն պատմեն ամենակարողի Բանին Աստուծոյ, և զ'ի հրշտակէն քաջալերելն» (Էջ 148). «Առաջնարգմանութիւն» մի բառ համարենք թէ երկու նշանակում է «առաջին թարգմանութիւն»: Մայրագոմեցիների չընդունածն են՝ Ղուկասի ԻԲ. 43—44 տները, որ այժմեան մեր ունեցած շատ Զերում նոյնպէս պակասում են: (Տես Մեսրոպ վարդապետի Աշուրովի Պետորութեան Առաջ. Ա. Էջ 203.)

— «Քանզի բազմերգելին Գրիգոր առաքելաքարոզ նահատակն Քրիստոսի զամենայն աւետարանական պիտառութիւնսն ճառագրեաց՝ զոր ինչ յաղագս Աստուծոյ Բանի տնօրինական կիրառութիւն պիտառէր, իսկ զահաքրտնին և ոչ յատուկ ձայնիւ յիշատակեաց, ուստի յայտ է, ասեն եթէ ննապատմութիւն աւետարանին ոչ է ընդունակ: Եւ եթէ ոք քան զնախաքարոզն Գրիգոր Խորհեսցի լինել խմաստուն, և այլ ինչ նորաձեւոցէ ճառել, այնպիսին դատապարտեալ է ասեն» (Էջ 154).

— «Արդ ով խարողորսակ թշնամիք, ներբողելով ձեր զնշմարտաքարոզ վկայն Քրիստոսի զյոգներջանիկն Գրիգոր սըտաղաղակ բանիւ սփածանել մերկութեանն ծածկոյթ, դովին այդու բանիւ ցուցից յայլում տեղւո՞յ բամբասանա

յարդարեալ ձեր նախադրուատին Գրիգորի, այլ ոչ գովեստ, քանզի որթողոքսական վերնադիտօղ քրիստոսազգեստ նախահայրքն գումարեալք ի Նիկիապողիս՝ կանոնադրեցին երկակի հնգեակ և եղակի քառեակ (=ուղում է ասել 14) թուով միայն՝ ի սրբումն կոչարանին ընթեռնութուղթո զաստուածաքարոզ առաքելոյն Պաւղոսի, և ի նորապատում զրութեանն զնոյն շարադրութիւն վերառեալ է, իսկ բարեգրուատելին Գրիգոր զառ ի հարցն լուեալն և ոչ մակադրեալ ի նոր թարգմանութիւնս, վկայաբանութեամբ ճառագրեաց, թէ «Անօրէն իշխանն իբրև աստուածանալն կամեցաւ, ասէ մաքուր առաքեալն, զամենեսին ընդ մեղք գրաւեաց» (Երրորդ Կորնթ. Բ, 16), և այս ի հնապատում տառսն վերատառեալ է, այլ ոչ ի նորապատում շարագրութեանն: Արդ՝ եթէ սակա ոչ գծագրութեան ի նորաքեր թարգմանութեանցն՝ հնապատում (տպ. հնագում) աւետարանին իբր զոչ ճշմարիտ ի բաց ընկեցեալ՝ մերժեսցի յեկեղեցւոյ, ընդ նմին խոտեալ բամբասի և մեծ մակադիտօղն Գրիգոր, սոռուերաբանութեամբ դրուատեալն ի ձէնջ» (Էջ 154—155):

18. Այս հատուածների մէջ «առաջնութիւն», «հնապատմութիւն», «հնապատում տառք», «հնապատում աւետարան» նշանակում են անշուշտ Սահակ—Մեսրոպեան խմբագրութիւնները (առաջին կամ «փութանակի» թարգմանութիւնը ասորականից և երկրորդը՝ յունականի վրայ յօրինուած), իսկ «նորապատում գրութիւն», «նորապատում շարագրութիւն», «նոր թարգմանութիւն», «նորաքեր թարգմանութիւնը» նշանակում են իմ կարծիքով մի եղջողող թարգմանութիւն, բոլորովին տարբեր Սահակ—Մեսրոպեան խմբագրութիւններից *: Նորաքեր բառը ցոյց է տալիս նաև, որ այս, ըստ իս Երրորդ, թարգմանութիւնը չէ կատարուած բուն երկրում, այլ օտարութեան մէջ: Խորենացուց վերեսում մէջ բերուածը՝ գի-

* Անշուշտ այդ հին խմբագրութեանցն են պատկանում նաև Ղաղար Փարագեցու և Թուվմա Արծրունու ակնարկածները՝ հմտ. Զարբ. Հ. Թարգմ. Էջ 217.

տութեան արդի վիճակում, հարկաւ չէ կարելի հառկանալ պատմաբանի, այլ բոլոր հաւանականութեամբ Հազարից յիշուած հալածուած և «փաթազիկէս» Մովսէս փիլիսոփոսի համար, որի հետ յիշում են և ուրիշ երկու թարգմաններ՝ Տէր և Խոսրովիկ, վերջինս օտարութեան մէջ մեռած։ Պատմաբանը շահագործելով Մովսէս փիլիսոփոսի անունը՝ ստիպուած պիտի իւրացնէր և նրա գործելը։

19. Ա. Գրքի հայ թարգմանութեամբ զբաղուողները շատ անգամ են օգտուել Քոթենաւորի այս հատուածներից, գլխաւորապէս Ղուկասի իԲ, 43—44 տների և Կորնթացւոց երրորդ թղթից մէջ բերուած վկայութեան առնուած Ագաթանգեղոսից, Վարդապետութիւն Գրիգ. ԴԼ, ԻԵ, Ճեր նոր հրատ. (Թիֆլիս) § 280] համար։ Մինչդեռ մեզ կարեսրը այս հատուածներում հին և նոր թարգմանութիւնն է, այնչափ պարզ շեշտուած «Հերձուածոց գրքի» կտորում։ Այս «նորաբեր» թարգմանութիւնից առ այժմ մեզ շատ քիչ բան է յայտնի. 1. որ նա չունէր Կորնթ. երրորդ թուղթը, 2. չունէր Ղուկ. իԲ, 43—44 տները. որոնք դուրս ձգուեցան յետոյ և հին թարգմանութեան Զերի շատերից. և 3. մի տուն միայն ունինք ապահովապէս այս թարգմանութիւնից, վերեսում մէջ բերուածը. «Ոչ աւարի տուն սկայի, եթէ ոչ նախկին հզօրն կապի» (Մարկ. Գ, 27), Մայրագոմեցիք չընդունելով Սահակ-Մեսրոպեան թարգմանութիւնը՝ հարկաւ իրենց գրութեան մէջ վկայութիւնը բերելու էին իրենց ընդունելի նոր թարգմանութիւնից, և այս բանին վկայում է Քոթենաւորը իւր ուռուցիկ. ոչ նուազ յունաբան և մուժոճովը. «Այդ շարահաւեալ [Մայրագոմեցիք] զիսրհուրդս իւրեանց՝ սկզբնականին [=սկսանին] մատենազրել այսպէս. Ոչ, ասեն, տկարութեամբ . . .» և այլն, (տես վերեսում մէջ բերուած)։ Այս միակ տան մէջ լեզուի կողմից ամենից բնորոշն է նախկին բառը նախ-ի առմամբ։ Ամբողջ Սուրբ Գրքում, գասական թարգմանութեամբ՝ և ոչ մի անգամ չէ գործածուած նախկին բառը և ոչ նրա բարդութիւն-

ներից ո՛ւ և է մէկը՝ Նախկի, Նախկին, Նախկնութիւն և
այլն յունաբան գպրոցի յաճախ գործածուած բառերիցն
են (տես վկայութիւնները Հայկ. Բառ.), և մեզ իրաւունք
են տալիս ենթադրելու, որ «նորաբեր» թարգմանութիւնը
յունաբան էր, որ շատ լաւ յարմարւում է այդ թարգմա-
նութեան մեզ յայտնի բոլոր այլ հանգամանքներին, Տիմո-
թէոսի Հակաճառութեան տարօրինակ յունաբան և բազ-
մաթիւ, մանաւանդ նոր կտակարանից, վկայութիւնները
մեզ առիթ տուին «նորաբեր» թարգմանութեան մասին
այս ենթադրութիւնը կազմելուն, Հարց է, արդեօք Տիմո-
թէոսի հայ թարգմանչինն են բոլոր այդ յունաբան վկա-
յութիւնները, թէ նա ձեռքի տակ ունէր մեր ենթադրած
«նորաբեր» Ա. Գիրքը և թարգմանութեան ժամանակ հե-
տեւում էր նրան, ինչպէս ուրիշները, նոյն իսկ յունաբան-
ներից, հետեւում են հին թարգմանութեան այս կամ այն
խմբագրութեանը։ Այս հարցերին պատասխան տալը պա-
հանջում է աւելի մանրակրկիտ ուսումնասիրութիւն և նոր
վերերևումներ, անտիպների հրատարակութիւն և այլն,
ուստի և դուրս է մնում այս յօդուածի սահմաններից։
Մեր նպատակն էր միայն «նորաբեր» կամ «Երրորդ»
թարգմանութեան վարկածը յանձնարարել բանասէրների
ուշագրութեանը։

20. Քոթենաւորի գրութեան ժամանակը մօտաւորա-
պէս յայտնի է, եօթներորդ դարու վերջերը։ Մայրագոմե-
ցիներին նա հեգնում է ասելով, «գրէ թէ Զ (եօթն հա-
րիւր) ամ լիեալ յետ չարչարանաց Որդւոյն Աստուծոյ՝ և
այօքան ժամանակը յանդիտութեան դնացին բոլոր ման-
կանք եկեղեցւոյ» էջ 157։ Զեռագրում եղել է Զ, բայց
հրատարակիշները, ինձ թւում է թէ իրաւամբ, տասերի
նմանութիւնից օգտուելով ուղղել են Զ (հմմտ. Օձնեցու
վարժապետ Թէոդորոսի մասին՝ իւր Օձնեցու գրածները
Ա. գլ.). Ուրեմն ապահովապէս եօթներորդ դարում կար
այդ «նորաբեր» թարգմանութիւնը, Խորենացու տասածները
իւր, այսինքն իւր փոեգոնիմի մասին, Ղաղարի տեղեկու-
թիւնները, մեզ հաստծ հին աւանդութիւնը «Երկլորդ»

կամ «փոքր» թարգմանիչների մասին, իմ այս յօդուածում արծարծուած նոր առումով, վերջապէս Տիմոթէոսի յունաբան հայ թարգմանութեան հաստատուն ժամանակը, հաղիւ մի քանի տարի Տիմոթէոսի մահից (+ 477, յուլիո 31) յետոյ կատարուած, կարծեմ մեզ իրաւունք են տալիս առանց անպատեհութեան հինգերորդ դարու երկրորդ կիսին գնել յունաբան դպրոցի սկզբնաւորութիւնը և այդ դպրոցի առաջին գործերիցն համարել իմ ենթադրած երրորդ թարգմանութիւնը, նոր գիւտերը և նոր հրատարակութիւնները հնարաւորութիւն կտան ապագայում իմ այս խոշոր գծերով ուրուագծածը ճշտելու, լրացնելու և եթէ հարկ լինի՝ նաև փոփոխելու *.

* *

21. Բատ ինքեան իմ ծրագրից դուրս էր խօսել Տիմոթէոսի Հակածառութեան յոյն ընազրի գրութեան ժամանակի և տեղի մասին։ Հրատարակիչները մի քանի կարեոր գիւտողութիւններ անում են այդ մասին յառաջաբանում, հիմնուած հայ բնագրի վրայ։ Ակներև է «յառատասահմանութեան պարապաւզի խօսքերից» (յառաջ. X) որ Տիմոթէոսը գրել է աքսորում. իւր հակաքաղկեդոնական գրութեանց անունները տալիս ասում է «շարագրեցի

* Խորենացու Պատմութեան վաւերականութեան պաշտպանները, խօսքս հարկաւ ոչ փողոցի, այլ այնպիսի հմուտների մասին է, ինչպէս են Նորայր Բիւզանդացին, Հ. Սարգսեանը, Մալիսասեանը, Կոնիբիրը, կարող են նոր ողի առնել Տիմոթէոսի ժամանակի ճիշտ որոշմամբ այլես ոչ մի արգելք չկայ լեզուական կողմից Խորենացու Պատմութիւնը գնել հինգերորդ գարու վերջին քառորդին, աւազ, եթէ միայն չլինէին միւս անհարթելի արգելափիթները։ Խորենացով զբազուողների համար հետաքրքրական է Միլանի կամ Մեղիուլանի եպիսկոպոս Ամբրոսիոսի մի հատուածի վերնադիրը. «Երանելոյ Ամբրոսեայ եպիսկոպոսի Մեզիլանացւոց» (Տիմոթ. էջ 18), Խորենացին ունի «Միզուլանոն» (Գ. 4.), անշուշտ յոյն Ճ և Ճ տառերի շիոթմամբ [ΜΙΖΟΥΛΑΝΟΝ կարգացուած ΜΙΖΟΥΔΑΝΟΝ], Մայալասը՝ Միզուլանոն Հմմտ, Կարիէրի Nouvelles Sources de Moïse de Khoren V. Հանդ. Ամս. 1894, փետր. Խորենացու և Մալալասի առնչութեան խնդրի լուծման համար անկարեոր չէ Տիմոթէոսի այս ասորայոյն (Զ. փի. Դ-ի) ընթերցուածը հինգերորդ դարից։

նախ այսորիկ մատեան Աստուծոյն Բայից ։ «Աստուծոյն Բայից» կոչուող մատեանը, ինչպէս կարելի է հետեցնել իմ կարծիքով «նախ այսորիկ» յունաբան առացուածից, որ նշանակում է «սրանից առաջ» (Հմմտ. դասական «յետ այսորիկ»), գրուած է Հակաճառութիւնից առաջ։ Միւս գրուածքի մասին առուած է, «գրեցի և այժմ՝ յերկուս մատեանս», որ հրատարակիչները իրաւամբ հասկանում են Հակաճառութիւնը, իւր երկու մասերով։ Մանաւանդ այդ հետեւում է «յերկուս» ձևից, որ չէ նշանակում երկու մատեան, այլ «երկու գրքով» կամ որ նոյնն է՝ հատորով, ուրեմն խօսքը իրօք պիտի հասկանալ Հակաճառութեան մասին, որ բազկացած է երկու մասից։ Տիմոթէոսը աքսոր գնաց 460-ի սկզբին, նախ Գանգրա և ապա Խերսոն (յառաջ. VIII): Հետաքրքրական է Զաքարիա Հոետորից առնուած այդ տեղեկութիւնները համեմատել Կայսերաց Պատմութեան աւանդածի հետ։ «Ղեւովն մեծ ամս ինն և տասն (=Լևոն Ա. Մակելէսնի, 457—474 թ.) ի սորտ երրորդ ամին Տիմոթեոս և Անատոլի նորին եղբայր՝ յափշտակեալ ի Սիղասկոսէ աքսորեցան ի Քերսովն, վասն չընդունելոյ զահման Քաղկեդոնի ժողովոյն. . . Զեհոն ամս վեշտասան (474—491) . . . գրեաց թուղթ, որ կոչի Հենատիկովն, այս է՝ միաւորիչ . . . և գործեցաւ այս յառաջին ամի թագաւորութեանն Զեհոնի . . . և ի նմին ամի՝ հրամանաւ թագաւորին դարձաւ Տիմոթեոս յԱզեքսանդր, և յերկորդ ամին վախճանեցաւ ։ Լևոն Ա. Անատոլիոս պատրիարքից թագաւոր պատկուեց 7 փետր. 457, այնպէս որ Տիմոթէոսի աքսորը 460-ի սկզբին՝ չէ հակասում Կայս. Պատմ. հազորդածին (երրորդ ամ Լևոնի): Հենատիկոնի ճիշդ-թուականն է 482-ը, որից երեսում է որ Կայս. Պատմ-ը շինթում է Հենատիկոնը և Բասիլիսկոս բռնաւորի 476-ի հրովարտակը ընդդէմ Քաղկեդոնի։ Տիմոթէոսը վերագարձաւ աքսորից 476-ին և մեռաւ 477 յուլիսի 31-ին, Զեհոնի Հենատիկոնից տարիներ առաջ։ Տիմոթէոսի առաջին գիրքը ինչպէս և երկրորդը՝ Հակաճառութիւնը, գրուած պիտի իննին ուրեմն 460—476-ի մէջերը։ Այս սահմանը կարելի է

աւելի ևս սեղմել, քանի որ Գեննադիոս պատրիարքին (458—471, սեպտ.) յայտնի է Տիմոթէոսի երկի լատին թարգմանութիւնը, որով և ապահովութեամբ պիտի դնել Հակաճառութեան գրութեան ժամանակը հինգերորդ դարու վաթունական թուերին:

22. Աւելի ևս կարելի էր ճշտել այդ թուականը, եթէ իմ ձեռքի տակ եղած միջոցներով կարելի լինէր իմանալ թէ քանի տարի տեսց Տիմոթէոսի աքսորի առաջին մասը Գանգրայում, որովհետեւ հայ թարգմանութեան մի բառից կարելի է հետեցնել, որ Հակաճառութիւնը գրուած է Գանգրայում և ոչ թէ Քերսոնում, ուրեմն Տիմոթէոսի աքսորի առաջին տարիները: Էջ 147 Տիմոթէոսը ասում է, որ Դիոսկորոսին աքսորեցին «...ի Գանգրայցոցն քաղաք, ի Պափղագոնիա, աստ ուր զարշաւանն կատարեաց . . .»: Իմ կարծիքով «աստ»ի գործածութիւնը Գանգրայի մասին՝ ապահովաբար ցոյց է տալիս, որ այդ տողերը գրելիս Տիմոթէոսը գտնւում էր Գանգրայում: Եթէ Քերսոնում գրելիս լինէր՝ Գանգրայի մասին պիտի առէր անդ կամ լաւ ևս առանց այդպիսի մի ցուցականի՝ «ի Պափղագոնիա, ուր զարշաւանն կատարեաց»: Ուրեմն Տիմոթէոսը զրել է Եղարու վաթսունական թուերուին Գանգրայում: Երեք նոյն այդ տասնամեակից էր և լատին թարգմանութիւնը (471-ից ոչ ուշ): Ասորին, որին ակնարկում են և հրատարակիչները յառաջաբանում, պահուած է մի շատ հին ձեռագրում, որի զրչութեան թուականն է 562*, ուրեմն և այդ թուից առաջ է ասորերէն թարգմանութիւնը, շատ հաւանականութեամբ կատարուած նոյնպէս հինգերորդ դարում: Խնչպէս տեսանք հայ թարգմանութիւնը 480 մարտ 29—484 մարտ 28 քառամեակից է: Այսպիսով շատ կանուխ թարգմանուած է Տիմոթէոսը, և մատչելի դարձած այն դարու քրիստոնեայ աշ-

* Այստի Կր. Очеркъ Исторіи Сирійской Литературы. տիկ. Тураева-ի թարգ. պրոֆ. Կոկովցովի լրացուցումներով Ս. Петерб. 1902, էջ 228.

խարհի չորս գրական մեծ լեզուներով գրեթէ բոլոր գրաշէտներին։ Այդ ցայց է տալիս Հականառութեան նիւթի հրատապութիւնը և ժամանակակիցների համար ունեցած կենսաթրթիւ նշանակութիւնը, ճիշտ այնպէս, ինչպէս մեզ համար են այժմս քաղաքական-տնտեսական խնդիրները*։ Այստեղից էլ պարզ է, որ հայերէնը հինգերորդ գարում, քրիստոնեայ քաղաքակիրթ աշխարհում, անհամեմատ աւելի մեծ նշանակութիւն ունէր, քան այժմս, երբ մենք թէ թուով և թէ քաղաքակիրթութեամբ շատ յետ ենք մնացել լուսաւոր ազգերից, և հազիւ թէ ընդունակ և' մեր ներկան և' մեր անցեալը ճիշտ ըմբռնելու։

ԳԱԼՈՒՍՏ ՏԵՐ ՄԿՐՏՉԵԱՆ

Յանիս Յ Էջմիածին։



* Տիմոթէոսի՝ Էլուրոս-կատու մականուան համար պիտի նկատել, որ Կուղ, (ասորերէն զնշան) դասական հայերէնում արգէն նշանակում է կատու, «կուղը և մկունք» թուղթ Բարուքայ, տ. Հայկ-Բառ։ Կատու բառի գործածութիւնը համեմատաբար աւելի ուշ է, առաջին անգամ մեզ յայտնի է Փիլոնի թարգմանչից (Եղիշից առաջ, բայց ճիշտ ժամանակը դեռ պատճեն չկատարում է և հետագա դաստիան գնահատում է չմբքի ընտառապահ պահունակ մանելու տեսքը)։ Մատենագրական վկայութիւններով թէն աւելի նոր ժամանակից, բայց իրաք աւելի հին է թուում կուղի երկրորդ նշանակութիւնը martes, սամսար, որի անունը հին հայերը տուել են իրենց անծանօթ ընտանի կենացանուն՝ կատուին։